

# ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՐՉԱՆԻԿ ԼԻՆԵԼ

Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանները Մաս 2

*«Եվ եթե նա ապրի հազար տարի կրկին անգամ, և մի լավություն չտեսնի. չէ՞ որ ամենքն էլ մեկ տեղ են գնում:»*

Ժողովող 6:6

Ա- Սողոմոնի բավարարվածության որոնումները

*«Մի եկ քեզ փորձեմ ուրախությունով, և բարիք էլ վայելիր.» 2:1*

1. Կրթությունը չի բավարարում

*«Ես մեծ եմ և իմաստությունով ավելի հարուստ քան թե Երուսաղեմումն ինձանից առաջ բոլոր եղածները... շատ իմաստության հետ շատ տրտմություն կա.» 1:16-18*

2. Հաճույքները չեն բավարարում

*«Մի եկ քեզ փորձեմ ուրախությունով...ծիծաղով...մարմինս գինով զվարդացնեմ...ամեն ինչ որ աչքերս պահանջում էին նրանից չարգելեցի, սիրտս չգրկեցի ոչ մի ուրախությունից, ... բայց ահա սա էլ էր ունայն:» 2:1-3,10*

3. Ձեռքբերումները չեն բավարարում

*«Ես մեծացրի իմ գործերը, ինձ համար տուններ շինեցի, ինձ համար այգիներ տնկեցի. Այգիներ և դրախտներ շինեցի, և նրանց մեջ ամեն տեսակ պտղաբեր ծառեր տնկեցի... Ես ետ դարձա, որ սրտիս հույսը կտրեմ արեգակի տակին աշխատած բոլոր աշխատանքիցս:» 4-5,20*

4. Հարստությունը չի բավարարում

*«Շատ արջառներ և հոտեր ունեցա ... ամենից ավելին: Ինձ համար գանձեցի արծաթ և ոսկի ... ինձ համար երգիչներ և երգչուհիներ դրի, դշխո և դշխոներ:» 7-8*

5. Հաջողությունը չի բավարարում

*«Եվ մեծացի ու բարգավաճեցի ինձանից առաջ Երուսաղեմումն եղածների ամենից ավելի... Ես նայեցի իմ ձեռքի արած բոլոր գործերին... ահա բոլորն ունայն էր ... և արեգակի տակին մի օգուտ չկա:» 9,11*

*«Ես ատեցի կյանքը» 2:17*

Բ- Երջանկության բանալին ըստ Հիսուսի  
(Մատթեոս 5:3-10)

1. Ճանաչել Աստծուն

*«Երանի հոգով աղքատներին.»* Համար 3

2. Կյանքի հիասթափությունների մեջ վստահել Աստծուն

*«Երանի սգավորներին, որովհետև նրանք կմխիթարվեն:»* Համար 4

3. Սպասել որ Աստված հոգա իմ կարիքները

*«Երանի հեղերին, որովհետև նրանք կժառանգեն երկիրը:»* Համար 5

4. Հետևել Աստծու պատվիրաններին

*«Երանի նրանց, ովքեր քաղցած են և ծարավ արդարության, որովհետև նրանք կկշտանան:»* Համար 6

5. Ներող սիրտ ունենալ

*«Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն են գտնելու:»* Համար 7

6. Խիղճը հանգիստ պահել

*«Երանի նրանց, ովքեր սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն կտեսնեն:»* Համար 8

7. Առողջ փոխհարաբերություններ կառուցել

*«Երանի խաղաղություն անողներին.»* Համար 9

8. Ապրել հավիտենականության հեռանկարով

*«Երանի նրանց, ովքեր արդարության համար են հալածվում, որովհետև երկնքի արքայությունը նրանցն է:»* Համար 10

*«Յնձացիր Տերով և նա կտա քեզ քո սրտի ուզածները:»*

Մաղմոս 37:4

Հաջորդ Քարոզի Թեման  
«Լավագույն Կերպով Գործածել Ժամանակը»  
Հովիվ Սարո Խաչիկեան